




Հ. Գարեգին Վրդ. Լազարեան

Հ. Գարեգին Վրդ. Լազարեան ծնած է Ախլաթի 1885ին: Մկրտությունն անունով Մելգոն կը կոչուէր: Տասնեւոթ տարեկանին Ս. Ղազար եկաւ եւ իր ծննդավայրին պէս սիրեց զայն. 1906ին քահանայօծուեցաւ Հ. Ղեւոնդ Վրդ. Տայեանին հետ: Երկու դասընկերներ, ձեռք ձեռքի տուած, հոգեպէս իրարմէ անբաժան, միասին ապրեցան ու միասին ժամադրուեցան կարծէք մահուան հետ:

Քահանայական ձեռնադրութենէ ետք, Հ. Գարեգին Վրդ. Լազարեան նուիրուեցաւ պատանիներու դաստիարակութեան. երկար տարիներ համբերութեամբ ու սիրով կրթեց անոնց հոգիները, նկարագրները կերտեց եւ անոնց սրտի զգացումները ազնուացուց:

Առանձնութիւնը եւ սրտի լուծիւնը

սիրող կրօնաւոր մըն էր. զիտէր որ Աստուծոյ աչքը իր բոլոր զոհողութիւնները կը տեսնէր, եւ այդ իրեն կը բաւէր:

1914-1918ի աքսորի տխուր օրերուն, ինքն ալ Պոլիս կը գտնուէր. եթէ ուզէր կրնար շուտով ազատիլ այդ միջավայրէն, բայց յօժարութեամբ յանձն առաւ մնալ իր աքսորուած ընկերներուն հետ՝ անոնց արցունքները ծաղկեցնելու նպատակով:

Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան դըպրոցին մէջ եղած է ուսուցիչ, մատակարար եւ տեսուչ. սիրուած եւ գնահատուած է իր աշակերտներէն. անոնք մինչեւ այսօր իրենց սրտին մէջ բարի եւ անձնանուէր հօր մը յիշատակը կը պահեն:

1946ին, Ընդհանուր Առաջիկայ կ'ընտրուի Միաբանութեան Վարչութեան, ապա վանքի կալուածներու մատակարարութիւնը իրեն կը յանձնուի. կ'աշխատի անտրտունջ. ուրախ է որ օգտակար կ'ըլլայ իր Միաբանութեան:

Իր վերջին տարիները Մուրատ-Ռափայէլեան դըպրոցին մէջ անցուց. զգալիօրէն կը հիւծէր կարծէք ամէն օր. ձայնը գրեթէ չէր լսուեր. աշխատիլ չէր կրնար. իր սենեակի առանձնութեան մէջ փակուած՝ իր երկինքը կը խոկար: Իր սեղանին առջնագեղեցիկ զարդը՝ փոքրիկ խաչելութիւնն էր, որուն քով իր ժամագիրքը կը հանդէսէր. մահուան հանդիպումին կը սպասէր եւ ամէն օր կարծէք Ալիշանին հետ կը կրկնէր. Սի՛րտ, մեղի բա՛ւ է. շարժումդ այլեւս կը բաւէ՛...:

1968ի Դեկտեմբեր 29ին, իր հոգիին առկայծ կանթեղն ալ մարեցաւ: Նոր Տարին երկինքի մէջ պիտի տօնէր...: Նոյն օր մարդիկ երկրաւոր տարիներ կը մաղթէին իրարու. նոյն պահուն, երկինքին մէջ հրեշտակները՝ անմահութիւն մաղթեցին մեր սիրելի վարդապետին:

Օրհնեա՛լ ըլլայ յիշատակդ, լուսահոգի վարդապետ:

Հ. Գ. Ս.

Հ. ՂԵՒՈՆԴ ՎՐԴ. ՏԱՅԵԱՆ

Սեպտեմբեր 12ին, Ս. Ղազարէն գուժուեցաւ վախճանումը Գեր. Հ. Ղեւոնդ Վ. Տայեանի, որ Միաբանութեան Միաբանութեան կարկառուն դէմքերէն մին հանդիսացաւ՝ իրրեւ սրբակենցաղ կրօնաւոր, տիպար դաստիարակ, վաստակաւոր դրագէտ եւ մանաւանդ իրրեւ մասնագէտ՝ եկեղեցական երաժշտութեան:

Ան ծնած էր Պարտիզակ 1884ի Յուլիս 30ին: Տեղւոյն նախակրթարանը յաճախելէ ետք, դեռատի պատանեակ՝ զրկուած էր Վենետիկ, Ս. Ղազար: Իր առաջին հանդիպումը Հ. Ղեւոնդ Վ. Ալիշանի հետ՝ կը յիշէր յաճախ յուզումով: Օժտուած մտքի ու սրտի ընտիր ձիրքերով, ան յաջողութեամբ կը բոլորէր դրական, անտուածարանական, աստուածաբանական իմաստասիրական, աստուածաբանական խիթարեան կ'օծուէր քահանայ Աստուծոյ, 1906ի Դեկտեմբեր 25ին, ձեռամբ Արհիպատիւ Իզնատիոս Արքեպս. Կիւրեղեանի:

Այնուհետեւ կը պաշտօնավարէր իրրեւ դասատու Ս. Ղազարի Ընծայարանին մէջ, ապա Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան վարժարանը: Իրեն կը յանձնուին հետըզհետէ պատասխանատու պաշտօններ վեհապետի, լուսարարապետի, տեսուչի: Տասնեակ տարիներ ձեռնհասօրէն կը վաճառէր «Բաղմավէպ» խմբագրութիւնը: Կը չրատարակէ դիւանական վաւերաթուղթեր՝ Մայր Դիւան Միաբանաց Վեհապետ Ս. Ղազարի 1930, մենագրութիւն մը երանելի Տ. Կոմիտաս Գէօմիւրճեան քահանայի աճիւններու մասին, ուսումնասիրութիւն մը Արքաճամ Արծիւեան նախընթացի վրա՝ Ս. Կաթողիկէ Պաթարեանի Աթոռին հարկաւորման վերաբերեալ: Ունի բաղմավէպ շահեկան յօդուածներ «Բաղմավէպ» ամսագրին մէջ: Իր զլուխ-գործոցը կը համարուին՝ եւրոպական նոգերով հրատարակուած շարականներու վեց հատորները, որոնց

անտարակոյս պիտի յաջորդեն ուրիշ հատորներ:

Վարչական մարդի վրայ եւս Հ. Ղեւոնդ Վ. Տայեան բերաւ իր բաժինը, վեց տարի վարելով Միաբանութեան ընդհանուր Աթոռակալի պաշտօնը, լուսահոգի Ուլուհոճեան Արքաճօր ժամանակ, եւ երկար տարիներ մնալով միաբանական Խորհուրդի անդամ:

Հ. Ղեւոնդ Վ. Տայեան իր հեղ բնաւորութեամբ, կարեկից սրտով, աշխատունակ կեանքով եւ խոր բարեպաշտութեամբ առինքնած էր միաբանակից եղբայրներուն սրտերը:

Բախտն ունեցայ զինք ճանչնալու նախ 1946ի Մարտին, երբ Հռոմ ժամանած էր ուխտակից վարդապետներու հետ, մասնակցելու համար բաղմավէպ այն պատմական Ս. Պատարագին, զոր պիտի մատուցանէր, հանդիսադրութեամբ Սրբազան Քահանայապետին, նորընտիր Հայ Կարգինալը, Վսեմաշուք Գրիգոր-Պետրոս ԺԵ. Աղաճանեան: Գիտէի որ զինք կը կոչէին «Ս. Ղազարի սոխակը». իսկապէս արդարացուց այդ կոչումը իր քաղցրածայն սարկաւազութեամբ:

Երկրորդ հանդիպումս իրեն հետ՝ տեղի ունեցաւ Պէյրութ, ուր ճարտարօրէն դասախօսեց «Քառորդ ձայնի դրութեան» մասին, Յիսուսեանց Սէն Ժողէֆ Համալսարանին մէջ, նորութիւններ յայտնելով երաժշտութեան հասարակութեան:

Երրորդ անգամ զինք տեսայ Ս. Ղազար, 1966ին, իր ալեւոյթին. եւ առիթն ունեցայ հաստատելու՝ թէ ո՛րքան նախանձախնդիր էր տոհմային այն բոլոր արժէքներուն, որոնք կը պահպանուէին Ս. Ղազարի Մայրավանքին մէջ:

Այս նախանձախնդրութիւնը ժառանգած էր Ալիշաններէ. իր կարգին վարակիչ դարձուցած էր նոյն նախանձախնդրութիւնը, որ սերունդէ սերունդ կը շարունակուի Ս. Ղազարի մէջ:

Յաւիտեանական լոյս իր հոգիին:

(«Մասիս»)

Մ. ԵՊՍ. ԹԵՐԶԵԱՆ